



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

17-88



391.542-2

Ր-88

ԹԻՖԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ



ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ ՖԷՐԻՍ.

Զորս պատկերով



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպար. Քաղաքաբնակարան, Ղազ. Ա. Մահաթի-Ճուղի  
Սիրգեհակյա փող. № 1

1904

Ինքնուրույն ընթացակարգով հաստատված Գրքերի Կրթության նախարարության կողմից

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆՆԵԱՆՑ

8891.99

23/1.1921 թվական

Թ- 88

# ԱՐՏԱԻԱԶԴ Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԷԻՐԻՍ

1001  
7608

Հանրային գրադարանի 2-րդ կենտրոնի 2-րդ հարկի 2-րդ սենյակում



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպար. Թուրքմենիստանի, Կապ. Ա. Մահաթի-Յակոբյան  
Սերգեյևսկայա փող. № 1

1904

19 APR 2013

31943

А Ф Р Е Я И З Р Я

Дозволено Цензурою. 23 Августа 1903 г. Тифлисъ.

ՈՍ ՀԱՆԳՈՒՑԵԱԿ ՀԱՅՐ

# Օհանջանի Թուրանկեսիցի

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

(† 1903 թ. ապրիլի 7-ին)

Գարնան տօնին, երբ ամեն տեղ  
Տիրում էր խինդ ու բերկրանք.  
Երբ ամեն բան նորոգում էր,  
Անում ծնունդ ու նոր կեանք—

Քո օրհասը մօտեցել էր,  
Կեանքիդ թելը բարակել:  
Անգութ ցաւը քեզ մաշել էր,  
Էութիւնըդ խորտակել:

Գարնանային վառ արեւը  
Չողջողում էր ու փայլում,  
Բայց քո կեանքի արևն արդէն  
Խուարում էր, մըռայլում:

Մահւան մահճում դու քայքայած՝  
Տանջում էիր շարաշար,  
Բայց աշխարհում, թշուա հայրիկ,  
Ես չը գտայ ցաւիդ ճար:

Զատիկ օր էր, ազիզ օր էր,

Օր փառաւոր յարութեան.

Բայց դու կեանքիդ հրաժեշտ արէիր

Ու ննջեցիր յախտեան:

Գաժան մահը, անգութ մահը

Յափշտակեց, բեղ տարաւ.

Կանաչ-կարմիր իմ զատիկը

Մի՞նեց գլխիս, սե՛ր գառաւ...

Ճրագըդ հանգաւ, դաւաըդ փակեց,

Մեզ թողիր որք, գընացիր.

Տաշտըդ քանդուց, բունըդ քանդուց,

Զագերդ եզան ցան ու ցիր:

Յուսահատուած լալիս էի

Ապառաժոտ սարերում,

Լալիս էի Գողթան երկրի

Անտիրտ, անգութ քարերում:

Բայց ինձ ոչ ոք չէր ամոքում,

Զէր լինում ինձ վշտակից.

Մայր չ'ունէի, որ ինձ գրկէր

Ու փարատէր իմ կսկիծ...

Բեկուած սրտով, անգին հայրիկ,

Մտեղծեցի այս վաստակ,

Որ քեզ համար իբրև արձան՝ան մաշտակ

Մընայ յաւէտ յիշատակդ աշ գլխիս հանգում

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐՏԱՇԷՍ Բ. Հայոց թագաւոր

ԱՐՏԱԻԱԶԿ

ՏԻՐԱՆ

ՏԻԳՐԱՆ

ԱՄԱՏՈՒՆԻ

ԿԻՄԱՔՍԵԱՆ

ԱԲԵՂԵԱՆ

ԱՌԱՒԵՂԵԱՆ

ՆՐԿՈՒ ՎԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ ԵՎ ԵՎԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԻ ՄԱՍԵՆԱՅ ՈՂԻՆԵՐ

ՔՐՄԱՊԵՏ և ՔՐՄԵՐ

ԼԱԼԿԱՆ ԿՈՅՍԵՐ

ՈՂԲԱՅՈՂ ԿԵՆԱՅՔ

ՄԱՍԵՆԱՅ ՈՂԻՆԵՐ

ԱՐՏԱՇԷՍԻ ՈՒՐԻԱԿԱՆԸ

Իշխաններ, աիկիճներ, օրիորդներ, պալատա-  
կաններ, փոխարներ, զօրք և ժողովուրդ:

Գործողութիւնը կատարուում է Արտաւաս փալատում  
և Մասեայ լեռներում 128—131 բնականներին:

Ներկայացման իրաւունքը վերադաճւած է հեղինակին:

Գրքի փոփոխութիւնները պիտի ընդհանրուին:

Գրքի փոփոխութիւնները պիտի ընդհանրուին:

2017

Կարգադրութիւն  
Ս. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Պ. Ա. Տ. Կ. Ե. Ը.

Ս. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Պ. Ա. Տ. Կ. Ե. Ը.

Փառահեղ պայուս

Մեծ դրամային խնայողութիւն

Տիրան Եւ Տիգրան

ՏԻՐԱՆ

Վաղ առաւօտեան, Հէնց որ երկինքը  
Բռնկւի բոցով և Մասիս լեռան  
Կատարը Հսկայ օժուի արևի  
Ոսկէ շողերով, գորագնդերը  
Կը խաղան առաջ:

ՏԻԳՐԱՆ

Իսկ ե՞րբ կը Հասնեն

Պարտից աշխարհը:



## ՏԻՐԱՆ

Կարծում եմ՝ շուտով,

Ազրիան կայսեր սուրհանդակն ասաց,  
Որ Հայոց արքան թո՛ղ, իբրև արծիւ,  
Մշանայ իսկոյն ու սանձաՀարի  
Յանդուգն, ըմբոստ՝ ապստամբներին:

## ՏԻԳՐԱՆ

Բայց չէ՞ որ մենակ պարսիկները չեն,  
Ատորիք էլ են Հռոմի կայսեր  
Գէմ ապստամբել:

## ՏԻՐԱՆ

Ազրիան արդէն  
Ուղարկել է զօրք Ատորոց հողը,  
Որ, անտարակոյտ, Պաղեստինի պէս՝  
Կ'աւերւի իսպառ:

## ՏԻԳՐԱՆ

Ստում են, կայսրը  
Յրել է ամբողջ Հրէից ազգը  
Մալքենի հողից, որ Հեռւից անգամ  
էլ նա չը տեսնի Երուսաղէմը:

## ՏԻՐԱՆ

Ո՛վ է մեղաւոր, թո՛ղ չ'ապստամբէր:  
(Մանում են Ամատունի, Առաւելեան և Աբեղեան):

## ԵՐԵՒՆԻ Թ ԻԻ

Նորակի, Ամատունի, Առաւելեան և Աբե-

## ԱՄԱՏՈՒՆԻ

Պատրաստ են արդէն իմ կտրիճները,  
Սյգը բացելիս՝ կը լինեն շարւածի:  
Պալատի լաւագ: բնույթայ միացող:

## ԱՌԱԽԵՂԵԱՆ

Պատրաստ է նաև իմ բոլոր զուեղը:

## ԱԲԵՂԵԱՆ

Պատրաստ եմ և ես,  
Հէնց որ լսեցի մեր թագաւորի  
Հրամանը սաստիկ, զօրքս անյապաղ  
Կարգաւորեցի:

## ՏԻՐԱՆ

Սրտաշէս արքան  
Գիտէ բոլորիդ ճշտապահութիւնն,  
Միշտ զոհ է եղել իր պատրաստակամ  
Եւ անձնանւէր նախարարներից:

## ԱՄՍՏՈՒՆԻ

Իսկ քանի՞ հազար զօրք է արշաւում:

## Ա.ԲԵՂԵԱՆ

Երևի՛ այնքան, որ իր նետերով  
Մթնացնի ամբողջ երկինքը Պարսից:

## Ա.ՌԱԲԵՂԵԱՆ

Երկինքը Պարսից այն ժամին մթնեց,  
Երբ սուրհանդակը սլացաւ այստեղ,  
Արքային յայտնեց Հռոմի կոչը:

## ԴԻՄԱՔՍԵԱՆԻ ձայնը

Ա՛հ, խնայիր ինձ... Օգնեցէք...

## ԱՄԵՆՔԸ (ապշած)

Ի՛նչ է...

(ներս է վազում Դիմաքսեանը, յետից—Ար-  
տաւազը՝ սուրը մերկացրած):

## Ե Ր Ե Լ Ո Յ Թ III

Նորանգ, Արտաւազը եւ Դիմաքսեան

ԴԻՄԱՔՍԵԱՆ (այն ու այն կողմ փախչելով)

Արքայ, արքայ... Որտե՞ղ է արքան:

## ՏԻՐԱՆ և ՏԻԳՐԱՆ (բռնելով)

Արտաւազը...

## ԱՐՏԱԻԱԶԴ (կատաղած)

Թողէք, պիտի սպաննեմ...

Մի որեւիցէ ստոր նախարար  
Յանդգնում է ինձ կշտամբել այնպէս,  
Ինձ հակառակել մի կնո՛ջ համար...

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Պարտաւոր էի...

## ՏԻՐԱՆ

Արտաւազը, ներքը.

Նա սխալել է...

## ԱՐՏԱԻԱԶԴ

Անդրդւելի՛ է,

Հեռացէք ինձնից...

## ԱՄԵՆՔԸ

Խնդրում ենք, ներքը...

## ԱՐՏԱԻԱԶԴ (Դիմաքսեանին)

Մի՞թէ կույր էիր, չը տեսնո՞ր՝ ով է  
Առաջիկ կանգնած... Զը ճանաչեցի՞ր  
Հայոց՝ արքայի գահաժառանգին.

Մի՞թէ մոռացար՝ ո՞վ է Արտաւազը...

## ՏԻՐԱՆ և ՏԻԳՐԱՆ (ծնկաչաք)

Օ՛, աղաչում ենք, Արտաւազդ եղբանւր,  
Խնայիր նորան, նորա փոխարէն  
Սպանիր դու մե՛զ...

## ԱՐՏԱԽԱՉԻ (Դիմաքսեանին)

Տուրացիները  
Քո հայր Փրօակի դէմքը կիսեցին,  
Իսկ Արտաւազդը Փրօակի որդու  
Մըրտը կը կիսի, կո՛ւրծքը կը ճեղքի  
Իր ահեղ սրով, ողջ գերդաստունը  
Բնաջի՛նջ կ'անի ու Հիմնադրատակ  
Առաքելի տունը, կալածքը բոլոր  
Կը դարձնի մոխիր: Կնց, կնց, Գիմաքսեան,  
Քո այդ չար լեզուն, թունաւոր լեզուն,  
Որ վիրաւորեց իշխանաւորիդ,  
Նս գո՛ւրս կը պոկեմ:

## ՏԻՐԱՆ

Օ՛, հանգստացիր,  
Բաւ է, Արտաւազդ, հանգիստ թող նորան,  
Սխալել է նա. ինքը չը գիտէ՛  
Թէ ի՛նչ է արել... Ների՛ր այս անգամ...

(Տիրանը և Տիգրանը՝ փոքր հանդստացնելով  
Արտաւազդին՝ դուրս են տանում նորան):

## ՆՐԱԿԱԼԹ IV

Գիմաքսեան, Ամասունի, Առաւելեան և

## Արեղեան

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Ասացէք, ո՛ւր է արդարութիւնը.  
Ինչո՞վ եմ արդեօք այստեղ մեղաւոր.  
Մի՞թէ չը պիտի ես պաշտպանէի  
Իմ ընտանիքը անպատու թիւնից:  
Մի՞թէ ես պիտի թող տալի՛ պղծեն,  
Յեխը շարտեն իմ սրբութիւնը,  
Արատաւորեն անարատ տունըս,  
Պատիւըս, յարգըս, անբիծ անունըս...

## ԱՄԵՆՔԸ (Դիմաքսեանին)

Ի՛նչ է պատահել...

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Եւ պահանջում է,  
Որ մնամ ես լուռ, անտարբեր, անխօս,  
Որ ես սառնասիրտ նայեմ իմ կնոջ,  
Սիրած ամուսնուս անպատու թեանը:

## ԱՄԵՆՔԸ

Ի՛նչ, անպատել է նա՞ քո ամուսնու՞ն...

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Բաւական չէ, որ անպատել է նա,  
Այլ և ուզում էր, ինչպէս որ տեսաք,  
Խողխողել սրով, պատառել կուրծքըս,  
Որովհետև ես հակառակել եմ,  
Դատափետել եմ անօրէն գործքը:

## ԱՄԵՆՔԸ

Չազի՛ր չարագործ, նողկալի՛ հրէշ...

## ԱՄՍՏՈՒՆԻ

Այդ մի ընդհանուր անպատուութիւն է  
Բոլորիս համար:

## ԱՌԱԻԵՂԵԱՆ

Ի՞նչով ենք արդեօք  
Մենք երաշխաւոր, որ վազն էլ յանկարծ  
Չի մտնիլ մեր տուն ու բռնաբարել  
Մերայիններին:

## ԱՅԵՂԵԱՆ

Անտանելի՛ է:

## ԱՄԵՆՔԸ

Պէտք է բողոքե՛լ այդ հրէշի դէմ...

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Արտաշէս արքան թո՛ղ սանձահարի

Իր լկտի որդուն. նա թագաւոր է,  
Սիրառատ հայր է ամենիս համար,  
Նա ինձամում է վերաւորներին,  
Պահպանում, պահում, անգոր լքեալին...

(Լսում են փողերի և շեփորների ձայներ. մշտ-  
նում է Արտաշէս իր պալատականների հետ միասին):

## Ե Ր Ե Լ Ո Ղ Թ Վ

Նորանք, Արտաշէս եւ պալատականներ

ԱՐՏԱՇԷՍ (բազմելով գահին)

Դէ, իմ սիրելի նախարարներս,  
Լիայոյս եմ, որ պատրաստ էք արդէն.  
Ինչպէս յայտնեցի, գնում ենք վաղը  
Դէպի Պարսկաստան: Բայց ինչո՞ւ այդպէս  
Շփոթւած էք դուք, յուզւած, այլայլւած...  
Չը լինի՞ թէ դուք սոսկում էք կուրի  
Արիւնոտ դաշտից... Ի՞նչ է պատահել,  
Խօսի՛ր, Դիմաքսեան:

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Բարեպաշտ արքայ,  
Արիւնոտ դաշտի ահն ու մահը  
Ոչի՛նչ մեզ համար. թշնամու սուրը

Մեղ չի վախեցնում: Մենք միշտ կուեն կենք,  
Միշտ էլ կը կուենք արքայիդ համար.  
Թշնամին մեզ թող յօշոտի սրով,

Ոտոխը մեզ թող խոցոտի տէկով,  
Օտարը մեզ թող ջախջախի սակրով—  
Բողոքը ոչինչ, ոչինչ մեզ համար:

Բայց երբ եղբայրդ է քեզ վիրաւորում,  
Երբ մերայինն է մեզ վիրաւորում,  
Օ՛, այն ժամանակ շարաւոտ վէրքը,

Մրմնջող վէրքը անտանելի է: Ինչպէս  
Երկաթէ սալին զարկիր դու մի փայտ,  
Զարկիր մի այլ բան—սալըն անտրտունջ

Կը տանի զարկը և կը դիմանայ.  
Բայց երբ երկաթէ սալին զարկում է  
Իր իւրայինը՝ երկաթից ծնւած

Երկաթէ մուրճը—նա այն ժամանակ  
Տնքում է խորը, ողբում ու լալին,  
Հառաչում բարձր, բողոքում ու թգիւն...  
ԱՐՏԱՇԷՍ

Ասածդ ճիշտ է, բայց խօսի՛ր դու պարզ,  
Առանց որևէ այլաբանութեան.  
Ո՛վ է այդ մուրճը:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐ (միաբերան)

Գահաժառանգըրդ,  
Արտաւաղդ որդի՛դ:

ԱՐՏԱՇԷՍ (առանձին)

Գարձեալ նոր գանգատ,  
Անառակ որդի... (բարձր) Իսկ ո՞վ է սալը:

ԳԻՄԱՔՍԵԱՆ

Ե՛ս... Սրգարադատ, ողորմած արքայ,  
Խլե՛ց ինձանից նա իմ պատիւը,  
Ուզում էր նաև խլե՛լ իմ կեանքը,

Որովհետև ես կամենում էի  
Փրկել իմ արզը անարզութիւնից...  
Լինէր նորա տեղ բիւր հազար ոտխ,

Սո՛ւրբս արիւնով ես կը ներկէի.  
Զը յանդգնեցի սառը պողպատը  
Հանել պատեանից, քանզի Արտաւաղդ

Գահիդ ժառանգն է: Զսպեցի ես իմ  
Կատաղութիւնը, որ դու էլ, արքայ,  
Զսպես քո որդուն:

ԱՐՏԱՇԷՍ (խիստ)

Ի՛նչ է արել նա:

ԱՌԱԻԵՂԵԱՆ

Անօրինութիւն ու ժանտ ստորութիւն

8091



## ԱՐՏԱՇԷՍ

Նա ժանտ է եղել իր ծնւած օրից,  
Բայց ասէք, տեսնեմ՝ ինչ է արել նա:

## ԱՄԱՏՈՒՆԻ

Յե՛րս է շարտել, ապականե՛լ է  
Խեղճ Դիմաքսեանի սուրբ ընտանիքը,  
Արատաւորե՛լ նորա ամուսնուն...

## ԱՐՏԱՇԷՍ (Դիմաքսեանին)

Ի՛նչպէս, Արտաւազդ Համարձակել է  
Վիրաւորել քե՛զ, այն նախարարի՞ց,  
Որի քաջ Հայրը իր անձը զոհեց  
Արքայի Համար: Համարձակել է  
Եւ ձե՛ռք բարձրացնել այն մարդու վերայ,  
Որի սերնդի առաջ յաւիտեան  
Պարտական է իմ ամբողջ սերունդը  
Բողոր գոյութեամբ: Ո՛վ երախտամո՛ռ,  
Դու մոլի՛ր զաւակ... Կանչեցէք այստեղ:  
(Մի պալատական դուրս է գնում)

## ԱՄԱՏՈՒՆԻ

Վեհափառ արքայ, քանի որ նա կայ,  
Մենք ամեն ըոպէ տաղնապի մէջ ենք.  
Մեր ընտանիքը, գոյքը, կալւածքը  
Ամեն մի ըոպէ վտանդի մէջ են:

## ԱՌԱԻՆԳԵԱՆ

Անցեալի տխուր օրինակները  
Եւ քստմենլի այս ներկայ դէպքը  
Մեզ ամենևին Հանգիստ չեն տալիս:

## ԱՖԵՂԵԱՆ

Ո՞ղջ լինիս, արքայ, դու ես մեր տէրը  
Եւ ապաւէնը: Թէ չը լինէիր,  
Ո՞վ պիտի պահէր ու մեզ պաշտպանէր  
Զար փորձանքներից:

## ԴԻՄԱՔՍԵԱՆ

Անգին թագաւոր,  
Երանի՛ր որդիդ զոնէ ունենար  
Քո վսեմութեան, առաքինութեան  
Իւր Հազարերորդ փոքրիկ մասնիկը:

## ԱՐՏԱՇԷՍ

Դուք Հանգիստ եղէք, կը սաստեմ նորան...  
(Մանում են Արտաւազդ, Տիրան և Տիգրան)

## ՆՐԵԼՈՅԹ VI

Նորակ, Արտաւազդ, Տիրան և Տիգրան

## ԱՐՏԱՇԷՍ

Մօտ եկ, Արտաւազդ, խօսելիք ունեմ:

## ԱՐՏԱԽԱՉԴ (կոպտարար)

Խուլ չէ ականջըս, հեռւից կը լսեմ:

## ԱՐՏԱՇԷՍ

Մօտ եկ ու պատմիր, ի՞նչ է պատահել  
Դիմաքսեանի հետ:

## ԱՐՏԱԽԱՉԴ

Մի՞թէ նա ինքը  
Դեռ չի պատմել քեզ:

## ԱՐՏԱՇԷՍ (դսպելով դայրոյթը)

Պատմել է, այո՛. ուրեմն ճի՞շտ է...  
Ինչո՞ւ ես լռում... Եւ դու չե՞ս զղջում  
Քո արարմունքից: Բաւական չ'եղաւ,  
Որքան որ լկաի չարագործութեամբ  
Հօրըդ անունը դու մինչև այսօր  
Նշաւակեցիր:

## ԱՐՏԱԽԱՉԴ

## Չարագործութիւն

Չեմ արել երբէք:

## ԱՐՏԱՇԷՍ

Իսկ ո՞վ սպանեց  
Մուրացանների Սրգամ իշխանին.  
Ո՞վ ջնջեց նորա բոլոր սերունդը  
Երկրի երեսից, դո՞ւ չէիր արդեօք:

## ԱՐՏԱԽԱՉԴ

Ես էի, այո՛, որովհետև նա  
Հրապուրեց իմ մօր: Ի՞նչ գործում էր:

## ԱՐՏԱՇԷՍ

Իսկ զիտե՞ս արդեօք,  
Թէ ի՞նչ է մայրը, ի՞նչ է ծնողը,  
Ի՞նչ է եղբայրը կամ ի՞նչ է քոյրը...  
Մայրական պատուով ուզում ես ծածկե՞լ  
Կեղտոտ գործերըդ, սքօղե՞լ պահ,  
Փառամով հողիդ... Ո՛չ, ո՛չ, Սրտաւազդ,  
ձանաչում ենք քեզ: Մայրըդ չէր պատճառ.  
Շլացել էիր Սրգամի պատուով,  
Որ և դու իսպառ յափշտակեցիր.  
Շլացել էիր նորա բարիքով,  
Այն էլ դու իսպառ յափշտակեցիր.  
Ի՞նչ կողոպտեցիր Մուրացաններին,  
Եւ ապա վերջը, ո՞վ դու չարագործ,  
Չեռքըդ ներկեցիր նորանց արիւնով...

## ՏԻՐԱՆ

Հայր, բաւական է...

## ԱՐՏԱՇԷՍ (Արտաւազդին)

Քո սև նախանձից,  
Քո չարութիւնից չ'ազատեց անգամ  
Թագադիր ասպետ ծերուկ Սմբատը,

Արքայական տան այն երախտաշատ,  
 Բարի ստնտուն, մեր մեծ դայեակը...  
 Ընդհանուր զօրքի հրամանատար էր—  
 Խլեցի՛ր նորա իշխանութիւնը.

Սյդ բաւական չէր, դեռ ուզում էիր  
 Բարձրացնել ձեռքըդ նորա ալեղարդ,  
 Հէգ գլխի վերայ... Եւ դեռ ասում ես,  
 Չարագործութիւն չե՛ս արել երբէք:  
 Իսկ ո՞վ սպանեց իմ Մաթան որդուն.  
 Դո՛ւ չէիր արդեօք, որ միւս եղբօրդ հետ՝  
 Որսի ժամանակ՝ թակարդ լարեցիր  
 Եւ արիւնակցիդ կեանքից զրկեցիր...  
 Ա՛ր, Մաթան, Մաթան, սիրելի՛ որդեակ.  
 Մեռանք, զնացի՛ր և դառը վիշտը  
 Սրտումըս թողիր. հանգի՛ստըս տարար,  
 Ծիծա՛ղըս տարար, խինդ ու բերկրանքըս  
 Խլեցի՛ր յաւէտ...

ՏԻԳՐԱՆ

Հայր, հանգստացիր...

ԱՐՏԱՇԷՍ (Արտաւազիկին)

Եւ դեռ ասում ես, չարագործութիւն  
 Չե՛ս արել երբէք: Մի՛ թէ ծնողի  
 Սիրտը խոցելուց աւելի դաժան  
 Չարագործութիւն կայ աշխարհի մէջ.  
 Մանուկ հասակից ամեն ժամանակ

Վիրաւորել ես, խոցել իմ սիրտը,  
 Սև օձի նման՝ թուճաւորել ես  
 Իմ բոլոր կեանքը. քո մոլի բարքով,  
 Վաւաշտութեամբ ապականել ես  
 Բոլոր երկիրըս. փառամոլութեամբ  
 Ոտնահարել ես իմ աւագներին,  
 Ընչաքաղցութեամբ յափշտակել ես  
 Նորանց գոյքերը. արիւնհեղութեամբ  
 Միշտ թաթախել ես, ներկել ձեռներըդ...  
 Ե՛կ, ե՛կ, ապերախտ սրվի՛, մօտեցիր  
 Մեր Դիմաքսեանին, հաշտելի՛ր նորա հետ.  
 Հաշտութիւնը միշտ բարիք է ծնում:  
 Մօտեցէ՛ք իրար և համբուրեցէ՛ք.  
 Վաղը դնում ենք պատերազմի դաշտ.  
 Լաւ չէ, որ անհաշտ և անմիաբան  
 Մենք ուղևորենք թշնամու հողը:  
 Ո՞վ գիտէ՛ մեզնից ո՞վ լետ կը դառնայ  
 Եւ ո՞վ կը զոհւի թշնամու սրին.  
 Պանդխտութիւնը և պատերազմը  
 Թշնամի են միշտ ճակատագրի հետ...  
 Գուցէ Հէնց ինքըս պանդուխտ աշխարհի  
 Արհաւիրքներէից չը վերադառնամ...  
 Մօտեցէ՛ք իրար, դէ՛, համբուրեցէ՛ք...  
 ԱՐՏԱԻԱԶԴ

Միտցն իմ սուրը կարէ համբուրել



Գիմաքսեանի Հետ, Արտաւազդ — երբէք:

ԱՐՏԱՇԷՍ

Սակայն դու պարտ ես հաշուել նորա Հետ,  
Ներումն խնդրել ու սիրտը շահել —

Նորա Հայր Գիսակ փրկել է քո Հօր...

ԱՐՏԱԻԱԶԴ

Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, փրկել է իմ Հօր.

Եւ դու կարծում ես, այդ մե՛ծ բարիք է

Քո որդու համար...

ԱՐՏԱՇԷՍ (ղայրացած)

Լուի՛ր, դու ըմբոստ.

Ուրեմն Հայրդ ոչի՛նչ քեզ համար...

(Բռնում է սրի երախակալը. շշուկ և իրարանցում):

ԱՐՏԱՇԷՍ (գոսպելով իրան)

Երանի՛ր քո տեղ մայրդ օձ ծնէլր.

Օձըն ամեն տեղ թէպէտ ծուռ է միշտ,

Բայց՝ իր սեփական բունը մտնելիս՝

Ուղիղ ամեն ժամ... Իսկ դու, դու, զաղլիր,

Անառակ որդի, Հօրըդ օջաղում,

Մեփական տան մէջ ծո՛ւռ ես, չարանե՛նդ,

Ինչպէս ամեն տեղ: Քեզ Հետ կը խօսեմ,

Յետոյ կը խօսեմ. եթէ ողջ, առողջ

Ես փերադարձայ Պարսից աշխարհից —

Կը սանձահարեմ յանդգնութիւնըդ.

Իսկ եթէ մեռայ, այլ ևս չ'եկայ,

Օ՛ր այն ժամանակ վա՛յ քեզ, Հայ աշխարհ,

Սա՛ է լինելու քո թագաւորը...

(Զեփոքներ ու փոքր. Արտաշէսը՝ Տիրանի,  
Տիգրանի, Նախարարների ու պալատականների հետ  
միասին՝ հեռանում է):

ԵՐԵՆՈՅԹ VII

ԱՐՏԱԻԱԶԴ (մենակ)

Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, ողորմելի՛ Հայր.

Եւ դու կարծում ես, որ Արտաւազդը

Կը լինի քեզ պէս շունջ ու վատնո՞ղ,

Որ տայ ամենայն մի բազդախնդրի

Նախարարութիւն, կալսածք ու հողեր,

Որ ամեն մարդու տայ առատ նւէր,

Պարզ և բարիք... Ո՛չ, սխալւո՛ւմ ես.

Արտաւազդ արքան ոչ թէ չի վատնիլ

Իր բարիքները, այլ և կը տիրի

Բոլոր ազգերին, աշխարհի բոլոր

Թագաւորներին կը յաղթահարի,

Ոտնատակ կը տայ և կ'իշխի նորանց

Ողջ Հարստութեան ու բարիքներին:

Եւ այն ժամանակ ողջ մարդկան ազգը

Ինձ կը խոնարհւի, կը հնազանդւի.

Արար աշխարհի բոլոր ծայրերում՝  
 Արևի ելքից արևի մուտքը,  
 Արևի մուտքից արևի ելքը,  
 Հիւսիսից հարաւ, հարաւից հիւսիս  
 Եւ ամենայն տեղ կը հնչի միայն  
 Արտաւանգղ, Արտաւանգղ, Արտաւանգղ...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

*[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

*[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Պ Ա Տ Կ Ե Ն

Արխայական դասըստան

Երեւոյթ 1

Երկու գերեզմանափոր

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ (Երգիկով փորում է հողը)

Հեծաւ արքան քաջ Արտաշէս գեղեցիկ,  
 սև ձին,  
 Արծւի նման՝ գետըն անցաւ, պարանը  
 ձեռքին:

Եւ ոսկէօղ, կարմիր կաշէ պարանը ձգեց,  
 Ալանների կոյսի փափուկ մէջքը ցաւեցրեց.  
 Բռնեց չքնաղ Սաթենիկին արքան Արտա-  
 շէս,

Կոյրն բերաւ բանակը հայ նա արագա-  
պէս:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ (փորկով)

Այսօր այդ քաջը այլ ևս չը կա՛յ.  
Մեռա՛ւ մեր արքան, ննջե՛ց յաւիտեան.  
Եւ փոքրիկ, անձուկ այս գերեզմանում  
Թաղում է այսօր աղգի մեծ փառքը.  
Մի բուռը չնչին սառը հողի տակ  
Գերեզմանում է մեծ թագաւորը:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Է՛հ, փորի՛ր, եղբայր. շուտով կը սկսւի  
Թաղման հանդէսը:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Փորում եմ, փորում.  
Բայց ի՛նչ եմ անում—սե գերեզման եմ  
Փորում իմ ձեռքով Հայոց պաշտելի  
Ու բարեխնամ արքայի համար:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Մեծ Արամաղղի կամքն էր այդպէս:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Եւ ո՞վ կը կարծէր, որ այն քաջառողջ,  
Անյաղթ հերոսը կը յաղթահարէր  
Անողորմ ցաւից:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Յաւն ու մահը  
Մարդուս ամեն տեղ հետևում են միշտ:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Թէ պարսիկները չ'ապստամբէին,  
Հոռի կայր Ադրիանոսը  
Ել չէր ուղարկիլ մեր թագաւորին  
Զսպելու նորանց յանդգնութիւնը...

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Կարծում ես, եթէ Արտաշէս արքան  
Զը գնար Մարանդ— չէր հիւանդանալ  
Ու չէր վախճանւիլ. սխա՛լ ես, եղբայր.  
Մեր ճակատադրի որոշումները  
Անփոփոխ են միշտ: Է՛հ, փորի՛ր, փորի՛ր:

Բ. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Գիտե՛ս, ասում են, երբ Բակուրակերտ  
Գիւղաքաղաքում հիւանդանում է  
Արտաշէս արքան, Աբեղեանն իսկոյն  
Ուղևորում է դէպի Երիզա,  
Որ Արտեմիդի կուռքերից խնդրի  
Բժշկութիւն և արևշատութիւն...

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐ

Արքայի կեանքը չէր հետաքրքիր

Նորա պիղծ հոգուն: Նա կամեցել է  
 Լոկ շողոքորթել մեր թագաւորին,  
 Որ արժանանայ նոր պատիւների:  
 Այ՛ն, ինչպէս չէ. զնացել է նա,  
 Որ աղօթք անի արքայի համար:  
 Իսկ արքան այսօր կը թաղւի այստեղ  
 Եւ Աբեղեանի սին երազները  
 Կը տանի իր հետ:

Բ. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Ա՛խ, ինչո՞ւ մեռաւ...

Ա. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Այ՛ն, նա մեռաւ. բայց նորա գործքը,  
 Բարի անունը երբէք չե՛ն մեռնիլ:

Բ. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Սակայն ո՞վ պիտի սորանից յետոյ  
 Ազգը խնամի, պահի, պաշտպանի:  
 Արտաշէսից յետ ո՞վ կը շէնացնի,  
 Կը լուսաւորի Հայոց աշխարհը.  
 Նորա ժառանգը, Արտաւազը որդին...

Ա. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Օ՛, այդ չար դեւի անունը մի՛ տալ...  
 Նա իր դազրելի, անօրէն գործքով  
 Կ'աւերի իսպառ Հայոց աշխարհը.  
 Նա կը կործանի՛ ու հիմնայատակ

Կըքանդի՛ ամբողջ Հայ ազգի տունը:  
 Իր ծնւած օրից թէ իր ծնողի  
 Եւ թէ մեզ համար եղել է նա միշտ  
 Նողկալի՛ մի հրէշ, չարանե՛նգ մի դև:

Բ. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Զուր չեն ասում, թէ վիշապազուններն  
 Նորան զողացել ու նորա տեղը  
 Մի դև են դրել ծնւած ժամանակ:

Ա. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Բայց կամաց խօսի՛ր, կարող են լսել...

Բ. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Է՛հ, թող մեզ լսեն ու տանեն կախ տան.  
 Քանի որ մեռաւ Արտաշէս արքան,  
 Ել չ'արժէ ապրել:

(Լուում է փողերի ու երգի ձայներ)

Ա. ԳԵՐԵՉՄԱՆԱՓՈՐ

Դուրս գանք, գալիս են...

(Գերեզմանափորները դուրս են գալիս գերեզ-  
 մանից: Մտնում են մի խումբ փողահարներ՝ հնչեցնե-  
 լով պղնձէ փողերը. յետոյ մտնում են Քրմապետը և  
 քրմերը):

Ն Ե Լ Ի Դ Թ II

Գերեզմանափորներ, փողհարներ, Քրմապետ  
եւ քրմեր

ՔՐՄԵՐ (երգելով)

Արամազդը մեծ, երկնային  
Խլեց մեզնից քաջ արքային,  
Թողեց մեզ որբ, տխուր, տրտում,  
Յաւ ու վիշտը հայր սրտում:

(Մտնում են Արտաւազդ, Տիրան, Տիգրան, տի-  
կիները և օրիորդներ):

Ն Ե Լ Ի Դ Թ III

Նորանգ, Արսաւազդ, Տիրան, Տիգրան, սի-  
կիները եւ օրիորդներ

ՔՐՄԵՐ (չարունակելով երգը)

Հայր որբում, Հայր լալիս,  
Թշուառ զլիսին վայ է տալիս,  
Ո՛վ Անահիտ, մայր բարերար,  
Մխիթարի՛ր դու Հայ աշխարհ:

(Քրմերի երգելու ժամանակ մտնում են Ամա-  
տունի, Դիմաքսեան և Առաւելեան՝ պալատա-  
կանների և իշխանների հետ միասին՝ շրջապատած  
Արտաշէսի զագաղը: Դադաղը բաց է, նորա մէջ ե-  
րևում է ննջեցեալը՝ արքայական ոսկեթել զգեստով,  
գլխին թագ, առաջին ոսկեղէն թուր: Դագաղի յե-  
տակից բերում են արքայական ոսկէ գահը: Մտնում  
են մի խումբ սևազգեստ և հերարձակ լալկան կոյ-  
սեր):

Ն Ե Լ Ի Դ Թ IV

Նորանգ, Ամասունի, Դիմաքսեան, Առաւե-  
լեան, պարասականներ, իշխաններ եւ լալ-  
կան կոյսեր

ԱՍԼԿԱՆ ԿՈՅՍԵՐ (պարելով ու լալագին)

Ազգըդ լայ, Արտաշէս,  
Լայ, լայ, լայ դառնապէս.  
Ա՛խ, աւա՛ղ, վա՛յ մեզ, վա՛յ,  
Օրըդ սե՛ւ, ո՛վ խեղճ Հայ:  
Լամ, ողբամ ու պարեմ,  
Բիւր անգամ ես վայեմ.  
Ա՛խ, աւա՛ղ, վա՛յ մեզ, վա՛յ,  
Կեանքըդ սե՛ւ, ո՛վ խեղճ Հայ:  
Ինչո՛ւ ենք էլ ապրում  
Այսուհետ աշխարհում.

Ա՛խ, աւա՛ղ, վա՛յ մեզ, վա՛յ,  
 Բաղդղղ սե՛ւ, ո՛վ խեղճ Հայ:  
 (Մտնում են մի խումբ ողբացող կանայք, ըս-  
 ւառազինւած զօրք և բազմաթիւ ժողովուրդ):  
 Երեւոյ թ V

ՈՂԲԱՅՈՂ ԿԱՆԱՅՔ (ծափ տալով)

Դու շինեցիր Արտաշատ  
 Մեծ քաղաքը մարդաշատ.  
 Բայց քաղաքըդ որբացած  
 Հեկեկում է դառնացած:

ԺՈՂՈՎՈՒՐԴ (տխուր)

Դառնացած, որբացած,  
 Որբացած, դառնացած:

ՈՂԲԱՅՈՂ ԿԱՆԱՅՔ

Ալանները գալիս են,  
 Մեծ ու փոքր լալիս են.  
 Զարթիլը քնից, Արտաշէս,  
 Օգնի՛ր Հային քաջի պէս:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Քաջի պէ՛ս, Արտաշէ՛ս,  
 Արտաշէ՛ս, քաջի պէ՛ս:

ՈՂԲԱՅՈՂ ԿԱՆԱՅՔ

Արտաշէսը չէ խօսում,  
 Խորքնած է չէ—լսում.  
 Արտաշէսին թաղում են,  
 Մեր ծաղիկը քաղում են:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Քաղո՛ւմ են, թաղո՛ւմ են,  
 Թաղո՛ւմ են, քաղո՛ւմ են:

(Արտաւարդ բազմում է գահին)

ՔՐՄԱՊԵՏ

Հայեր... Երկինքը մթնե՛ց մեր զլիին,  
 Սևացա՛ւ աշխարհ մեր ազգի Համար.  
 Երկրիս մեծ մարդը, աշխարհիս զարդը  
 Այլ ևս չը կա՛յ, չքացա՛ւ իսպառ:  
 Խաւարե՛ց լոյսը, կորա՛ւ մեր յոյսը—  
 Ննջե՛ց յաւիտեան պաշտելի արքան:  
 Ել ո՛վ կը լինի մեր քաջ Արտաշէս,  
 Ել Հալը չ՛ունի հովիւ նորա պէս...

ԱՐՏԱՒԱԶԴ (տուանձին)

Յիմա՛ր անասուն, ես՝ Արտաւարդըս՝  
 Ինչո՛վ եմ պակաս Արտաշէս հօրից:

## ԳՐՄԱՊԵՏ (շարունակելով)

Աննման արքայ, երբ քո Սանատրուկ  
 Հայրը մահացաւ, գա՛հը բարձրացաւ  
 Ինքնակոչ արքան՝ Երւանդ անարժան,  
 Որ ցեղըդ ջնջեց ու քեզ հալածեց —  
 Դու անտիրական, հէզ, հալածական  
 Որք մանուկ էիր. դու հայր չ'ունէիր,  
 Մական մեր Սմբատ քո հայրը դարձաւ,  
 Որ երբ մեծանաս, դու էլ հայր դառնաս  
 Սմբատի համար: Նա քեզ խնամեց,  
 Չարիքից փրկեց, պահեց, պահպանեց:  
 Երբ դու մեծացար, ջնջեցիր իսպառ  
 Երւանդին զազիր ու ժառանգեցիր  
 Գա՛հըդ հայրական, դարձար մեր արքան:  
 Եւ Սմբատ սիրով, սեփական ձեռով  
 Քո թագը կապեց ու ինքը ննջեց...  
 Այժմ ո՞ւր ես դու, Սմբատ ստնտո՞ւ.  
 Ե՛լ գերեզմանից, մահի ճիրանից  
 Մանրկիզ փրկիր, օ՛ եկ, ազատի՛ր...  
 Բայց Սմբատ ասպետ ննջե՛լ է յաւէտ —  
 Չի լսում նա մեր ողբ ու հառաչներ.  
 Թո՛ղ ե՛ս ննջէի, որ չը տեսնէի  
 Արքայի մահը, մեր մարած ջահը...  
 ԳՐՄԱՔՍԵԱՆ

ձակատամարտը թնդում, եռում էր

Ախուրեանի մօտ: Արտաշէս արքայ,  
 Կուում էիր դու ժանտ Երւանդի հետ:  
 Աղաւնենշան, վիշապազուլի  
 Եւ արծենկար քո դրօշակները  
 Եթերի միջին ծածանում էին  
 Արագած սարի անուշ հովերից,  
 Հայ հերոսներին խրախուսում վերից.  
 Սոսկում էր աշխարհ պղնձէ անթիւ  
 Մեր վահանների ահեղ բաղխիւնից  
 Ու նիզակների ուժղին կոփիւնից:  
 Երբ ոսոխները արիւնաշաղախ  
 Թաւալում էին լայնաձիգ դաշտում,  
 Յանկարծ Տուրացոց հեծելազորքը՝  
 Մահ սպառնալով՝ քեզ շրջապատեց:  
 Եւ ահա Գիսակ հայրըս յարձակեց,  
 Վայրագ ոսոխին ոտնատակ տրւաւ,  
 Իր գէմքը կիսեց թշնամու սրով  
 Եւ կեանքը դուհեց արքայիդ համար.  
 Իր կեանքը դուհեց, քո կեանքը փրկեց,  
 Որ հովիւ լինես մեր ազգի համար,  
 Պահես, խնամես Հայաստան աշխարհ.  
 Բայց, աւանդ, այսօր այլ ևս չը կայ  
 Ազգի հովիւը, ննջե՛ց յաւիտեան,  
 Իր հօտը թողեց անտէ՛ր, անխնամ...  
 ...դանա՞ ձմյ չո՞ վչս չո՞ վչս ում՞...  
 111

ԱՐՏՍՒՍՁԴ (անանձին)

Շուպլի՛ր, Ներսէ՛ս, անմիտ խօսքերըդ:

ԱՄՍՏՈՒՆԻ

Ո՛վ երախտաշատ Արտաշէս արքայ,  
Դու պանդուխտների, տարագիրների  
Ապաւէն ու յոյս. երբ Ամատունեաց  
Սերունդըս եկւոր զուրկ էինք տնից  
Եւ օթեանից, դու քո աշխարհում  
Տուն ու տեղ տւիր, պատսպարեցիր  
Եւ արժանացրիր անարժաններին  
Նախարարական բարձր կոչումին.  
Բոլորիս համար՝ դու դարուլագութ,  
Սիրող հայր էիր, բայց այժմ, աւանդ,  
Այլ ևս չը կաս...

ԱՌՍԻՆԴԱՆ

Այլ ևս չը կաս,  
Դու և մե՛զ համար, մեծագոր արքայ.  
Երբ Ալաններիս յաղթահարեցիր,  
Մեր Սաթենիկին քո տունը բերիր—  
Դու չը մոռացար Հայոց թագուհու  
Ազգականներիս. և դու մեզ՝ բոլոր  
Առեղեմաններիս՝ բաղդաւորացրիր  
Եւ արժանացրիր պատւի ու փառքի.  
Սակայն առանց քեզ՝ պատիւըս, փառքըս  
Այսուհետ ոչի՛նչ, ոչի՛նչ ինձ համար...

ԱՐՏՍՒՍՁԴ (խիտ)

Դէ, բաւական է, զագաղն իջեցրէ՛ք:

ՏԻՐԱՆ (լալով)

Ա. խ, հայր իմ, հայր իմ...

ԱՐՏՍՒՍՁԴ

Տիրան, քեզ զսպի բ...

ՏԻՐԱՆ (լալով)

Ո՛վ հայր իմ, հայր իմ, մեռա՛ր ձմեռը

Պանդուխտ աշխարհում և վերջին անգամ՝

Աչքդ փակելիս՝ կարօտ մնացիր

Մայրենի երկրիդ: Մահիցըդ առաջ

Գոնէ կատարէր սրտիդ տենչանքը—

Մի անգամ էլ դու գոնէ տեսնէիր՝

Մեր Նաւասարդի թարմ առաւօտը,

Ծիւղահանների թանձրացած ծուխը,

Եղջերուների, եղնբրի վազը.

Մի անգամ էլ դու գոնէ լսէիր

Քո թմբուկների, փողերի ձայնը...

ԱՐՏՍՒՍՁԴ

Ես ձեզ ասացի, զագաղն իջեցրէ՛ք:

(Գագաղն իջեցնում են գերեզմանի մէջ. սկսւ-  
ում է ընդհանուր լաց):



## ԳՐԾԱՊԵՏ (յուսահատ)

Հայեր, քանի որ հատանք այս օրին,  
էլ ինչո՞ւ իզուր ապրենք աշխարհում:

(Լալիան կոյսերը և ողբացող կանայք հերթով  
երգում են իրանց ողբը. նորանց ձայնակցում են  
նւագարանների մեղամաղձոտ և տխուր հնչիւնները:  
Մի քանի աիկիւններ և օրիորդներ յուսահատուած գը-  
լորում են գերեզմանի մէջ: Արտաւազը խոժոռա-  
գէմ նայում է ինքնակամ մեռնողներին):

## ԱՐՏԱԻԱԶԴ (առանձին)

Սիրտըս այրում է, սիրտըս բորբոքում.

Եւ կրճքիս միջին կարծես վառւում է

Մի սարսափելի, ահաւոր խարոյկ.

Եւ կարծես՝ թէ մի սոսկալի վիշապ

Կրծում է, մաշում սրտիս խորքերը,

Ուզում է կուրծքըս ճեղքել, պատառել,

Դուրս վազել աշխարհ, ջնջել մարդկային

Սրտերի սէրը...

(Լալիան կոյսերը և ողբացող կանայք շարու-  
նակում են իրանց ողբը: Զօրականների և ժողովրդի  
մէջ սկսում են ինքնատպանութիւններ):

## ԱՐՏԱԻԱԶԴ (առանձին)

Արքայի մահը

Տանում է իր հետ բազմաթիւ զոհեր.

Սակայն վիշապը դարձեալ կրծում է,

Ջլատում սիրտըս... Զօրականներըս

Մեռնում են ահա, ազգըս վերջացան  
Կամաւոր մահով... Սակայն ո՞ւմ համար—

Մի ցուրտ դիակի, մեռելի համար:

Ժառանգի համար թէպէտ կարևոր,

Հարկաւոր է իր նախորդի մահը,

Սակայն ժառանգը էլ ի՞նչ ժառանգի,

Քանի որ չը կայ էլ ժառանգութիւն:

Արտաշէս մեռաւ — զօրքըս կոտորեց,

Աշխարհըս քանդեց, աւերակ դարձաւ...

(Ինքնատպանութիւնները շարունակում են)

## ԱՐՏԱԻԱԶԴ (գայրացած)

Ընդհատեցէք ձեր ողբն ու վայնասուն.

Թողէք ձեր լացը և հառաչանքը,

Սրերը դրէք պատեանների մէջ...

Արտաւազդ արքան հրամայում է ձեզ,

Որ վերջ տաք անմիտ անձնագոհութեան:

(Հետզհետէ միջնում է երկինքը)

## ԳՐԾԱՊԵՏ

Ողորմած արքայ, ինչպէս ոտնատալ

Տանք մեր կրօնի պատւիրանները.

Թէ մեզ չը զոհենք մենք մեր հանգուցեալ

Արքայի սիրոյ ու պատւի համար,

Մեր աստածների ահեղ զայրութից  
Շանթեր ու կայծակ կը թափուեն երկնից  
Եւ արար աշխարհ բնաջինջ կ'անեն:  
Արտաշէս արքան հայր էր մեզ համար,  
Մենք՝ նորա բոլոր հէգ զաւակներըս՝  
Պարտական ենք արդ սիրել ու պաշտել  
Նորա անմոռաց, սուրբ յիշատակը:

ՍՐՏԱՒԱԶԴ (դայրացած)

Մոլորած դու քնւրմ, մոլորած ամբոխ,  
Ի՞նչ արաւ հայրըս մեր ազգի համար,  
Ի՞նչ բարիք բերաւ նա մեր աշխարհին,  
Որ դուք անտեղի անձնագոհութեամբ  
Ներկում էք հողը կարմիր արիւնով,  
Բւերի նման՝ անդադար վայում,  
Ազուաւի նման՝ կռում, կրկռում  
Նորա անզգայ դիակի շուրջը...  
Արտաշէս արքան մի սովորական  
Հայ թագաւոր էր և ուրիշ ոչինչ:  
Նա ոչ մի բանով չի ապացուցել  
Իր մեծութիւնը և վեհութիւնը.  
Գահը բարձրացաւ Սմբատի շնորհիւ.  
Թէ Բաղրատունի ծերը չը լինէր,  
Հայրըս էլ երբէք արքայ չէր լինել...  
Բազմելով գահին՝ նա մեր պետական  
Գոյքն ու բարեքը շրուպից, վատնեց.

Վերջը մահացաւ ու տարաւ իր հետ  
Բոլոր երկիրըս... Ո՛հ, հայր իմ, հայր իմ,  
Էլ ինչպէս պիտի ես թագաւորեմ  
Աւերակ դարձած աշխարհի վերայ...

(Որոտմունք և փայլատակումներ: Յանկարծ  
յայտնուում է Արտաշէսի ուրախանք: Արտաւազդը  
սարսափած վեր է թռչում գահից և անթարթ նա-  
յում է ուրախանին: Խուլ շշուկ ժողովրդի մէջ):

Երեւոյթ VI

Նորանց և Ուրախան

ՈՒՐՆԱԿԱՆ

Անէ՛ծք, անէ՛ծք ժանտ, ապերախտ որդուս.  
Գնւ, որ զարշելի, անարդ չարութեամբ  
Պղծեցիր տունըս, բոլոր երկիրըս,  
Գնւ, որ անօրէն, դիւալին դործքով  
Նախատինք բերիր իմ ազգի համար.  
Գնւ, որ նախանձով, փառամոլութեամբ  
Թունաւորեցիր իմ բոլոր կեանքը—  
Աճիւնի՛ս անգամ չը տւիր հանգիստ,  
Թոյնըդ թափեցիր և շիրմի՛ս վերայ.  
Յաւիտենական նինջըս խախտեցիր,

Իմ ոսկորները անհանգիստ արիւր

Ու նախանձեցիր անզգայ, անշունչ

Ծնողիդ սառած դիակի փառքին...

Անիծում եմ քեզ, որ եթէ ելնես

Ազատ Մասիսի վերայ դու որսի—

Քաջքերը բռնեն, տանեն քեզ Ազատ

Մասիսի վերայ, այնտեղ միշտ մնա՛ս՝

Յաւիտեան կարօտ դու պայծառ լոյսի...

(Արտաւազը անթարթ հայեացքով ու սարսափած հետևում է ուրւակահին, որը մտնում է գերեզմանի մէջ):

### Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

### Ե Ր Ր Ո Ր Գ Պ Ա Տ Կ Ե Ր

Մասեաց լեռները

Երեւոյթ I

ԶՐԱԿԱՆՆԵՐ (երգելով)

Հեռու կացէք, ճանպա տւէք,

Ե՛լ դուք լեռներ վիթխարի.

Նետը ձեռին գալիս է մեր

Հայոց արքան քաջարի:

ԱՐՁԱԳԱՆՔ

Հայոց արքան քաջարի...

ԶՐԱԿԱՆՆԵՐ

Ո՛ւր էք վազում, զո՛ւր էք վազում,

Ե՛լ սարսափած երէներ,

Չէ՛ք ազատել թագաւորի  
Գամիւռներից ահաբեր:

ԱՐՁԱԳԱՆՔ

Գամիւռների՛ց ահաբե՛ր...

ԶՕՐԱԿԱՆՆԵՐ

Ցուքըդ սիւնի՛ր, շողքըդ սիւնի՛ր,  
Ո՛վ արեգակ դու պայծառ.  
Ոսկէ շողով լուսաւորի՛ր  
Արքայական ճանապարհ:

ԱՐՁԱԳԱՆՔ

Արքայական ճանապարհ...  
Սրբազան ճանապարհ...

ԶՕՐԱԿԱՆՆԵՐ

Տիեզերքի ճարտարապետ,  
Ո՛վ արարիչ Արամազդ,  
Սար ու ձորում անխորձ պահի՛ր  
Մե՛ծ արքային Արտաւազդ:

ԱՐՁԱԳԱՆՔ

Մե՛ծ արքային Արտաւազդ...

(Հեռանում են: Մտնում է Գիմարսեան)

Երեւոյ թ. Ա

ԴԻՄԱՔՍԵԱՆ (մեհակ)

Մե՛ծ արքային Արտաւա՛զդ... Անմիտնե՛ր,  
Ինչո՞վ է նա մե՛ծ. իր չարութիւնո՞վ:  
Հայոց աշխարհը անէ՛ծք է թափում,  
Նախատում է իր դարձ թագաւորին.  
Իսկ սոքա այստեղ գովեստ են ձօնում,  
Օրհնում են նորան ու փառաբանում:  
Ո՛վ շողոքորթներ, ժա՛նտ կեղծաւորներ,  
Գուք, որ խաբում էք արքայի սիրտը,  
Մի՛թէ չէք լսում ձեր սրտի ձայնը.  
Դո՛ւք, որ նենգաւոր, չար բռնակալին  
Քճնում էք այդպէս, անուշ խօսքերով  
Փայփայում նորա լսողութիւնը —  
Ինչո՞վ էք արդեօք տարբերում ցեխի  
Կեղտոտ որդներից... Օ՛ դուք, վարձկաններ,  
Շողոքորթեցէ՛ք Աբեղեանի պէս,  
Եւ կեղծ ու պատիր, քաղցր խօսքերով  
Հաճոյացէ՛ք ձեր ահեղ հրէշին.  
Թի՛թեռի նման՝ դուք պտտեցէ՛ք  
ձրագի շուրջը: ձրագն անշուշտ,  
Թէ ինքն լանկարձ չը խաւարեցաւ,  
Կը խաւարեցնի ձեր ամբողջ կեանքը...

(Հեռանում է: Մտնում են Արտաւազդ, Տիրան  
և Աբեղեան):

## Երեւոյթ III

Արսաւագի, Տիրան եւ Տիրաւէ

## ԱՐՏԱԻԱԶԴ

Նետերըս իզուր թռչում են օդում,  
Կէտ նպատակին երբէք չեն հասնում.  
Սակայն կրնճերը և եղնիկները  
Վազում են անվերջ, մօտովրս անցնում,  
Անվտանգ, անփորձ՝ փախչում, ազատուում:

## ԱՖԵՂԵԱՆ

Ողորմած արքայ, ընդհակառակը  
Ինձ թւում է, որ ամբողջ աշխարհում  
Դեռ ոչ եղել է, ոչ էլ կը լինի  
Քեզ նման փորձած, հմուտ նետաձիգ:

## ԱՐՏԱԻԱԶԴ

Բայց չէ՞ որ այսօր բոլոր նետերըս  
Վրիպում են անվերջ և իզուր կորչում:

## ԱՖԵՂԵԱՆ

Ես կանգնած էի մեծ ժայռի տակին,  
Երբ արձակեցիր քո վերջին նետը.  
Նա եկաւ ուղիղ, շեշտակի ցցեց  
Վարագի կողը, ծակեց ու անցաւ:

## ԱՐՏԱԻԱԶԴ

Դու սխալում ես, այն իմ նետը չէր.  
Այն Ամատունին զարկեց յաջողակ  
Եւ ամբողջ խմբով տեսած վարազիդ  
Յետևից ընկաւ... Այո, նա զարկեց:

## ԱՖԵՂԵԱՆ

Բայց դարձեալ կ'ասեմ, որ քեզ հետ մրցել  
Ոչ ոք չի կարող:

## ՏԻՐԱՆ (առանձին)

Լպի՛րջ շողոքորթ...

## ԱՐՏԱԻԱԶԴ

Իմ անգին Աքե՛ղ, էլ իմ նետերը  
Չեն հնազանդում արքայի կամքին:

## ԱՖԵՂԵԱՆ

Արքայի բարձր կամքի առաջին  
Խօնարհում է՝ ողջ Հայաստան աշխարհ,  
Հօր արքայի ոտների տակին  
Սարսում է երկիր ու դողում գետին.  
Ծովեր ու գետեր, սարեր ու ձորեր  
Հընազանդ են մեր մեծ թաղաւորին.  
Սուռն, անասուն, միջատ ու սողուն  
Բոլորն էլ հլու հպատակ են քեզ...

## ՏԻՐԱՆ (բարկացած)

Դէ, բաւական է, Արտաւազդ արքան  
Միայն նետերի մասին է խօսում:

## ԱՐՏԱԻԱԶԴ

Այո, նետերըս չեն հնազանդում

Արքայի կամքին... Հէնց որ լայնալիճ

Աղեղիս լարը քաշում եմ, ձգում

Ու նշան դնում — գալի՛ս է յանկարծ,

Ձեռքերըս ցնցում զէնքըս տատանում:

## ԱՔԵՂԵԱՆ

Հզոր թագաւոր, ո՛վ կը յանդգնի

Ձեռքերըդ ցնցել, զէնքըդ տատանել...

## ԱՐՏԱԻԱԶԴ

Նա, նա, որը ինձ հանդիստ չէ տալիս,

Որ ամբողջ երկու տարի շարունակ

Ինձ հետևում է ու միշտ հալածում:

## ՏԻՐԱՆ

Մոռացիր, եղբայր, մոռացիր նորան.

Թող դու այդ մռայլ մտածմունքները...

Այսօր եկել ենք մենք որս անելու,

Մենք պիտի խնդանք և ուրախանանք:

## ԱՔԵՂԵԱՆ

Եւ բնութիւնը կարծես ժպտալով՝

Ամենայն կողմից հրաւեր է կարդում,

Օրհնում արքայի բարձր անունը:

## ՏԻՐԱՆ

Տեսէ՛ք, թէ որքան պարզ է երկինքը,

Եւ ինչպէ՛ս ուրախ ժպտում է վերից

Ոսկէ արեղը: Նայեցէ՛ք այնտեղ՝

Դէպի Մասիսի ձիւնոտ կատարը —

Ա՛խ, ինչպէ՛ս փայլում, շողշողում է նա

Արևի պայծառ ճառագայթներից,

Կարծես՝ մի պճնւած նորահարս լինի:

Իսկ տեսնո՞ւմ էք դուք այն բիւրեղափայլ

Եւ ականակիտ արծաթ-ջրերը,

Կարծես՝ թէ անզին մարզարիտներ են

Թաւալում վերից...

## ԱՐՏԱԻԱԶԴ (ցոյց տալով մի կողմ)

Իսկ այն տեսնո՞ւմ էք,

Այնտեղ նայեցէ՛ք. եկել է դարձեալ

Ձեռքըս ցնցելու ու տատանելու

Նետ ու աղեղըս... Ահա նայեցէ՛ք,

Տեսէ՛ք՝ թէ որքան դժնդակ է նա.

Իժգոյն ու սառած նորա շուրթերից

Կարծես՝ ահաւոր անէ՛ծք է հնչում:

## ՏԻՐԱՆ

Ոչինչ չեմ տեսնում... Ո՛հ, հանգստացիր...

ԱՐՏԱՒԱԶԴ

Ո՛չ, ո՛չ, ո՛չ, նայիր... Աչքերից կարծես  
Շանթեր են թափուում. տես, մօտենում է,  
Գալիս է նա խիստ ու դաժան դէմքով...

ԱՔԵՂԵԱՆ

Ողորմած արքայ, այնտեղ ես միայն  
Մի քար եմ տեսնում և ուրիշ ոչինչ.  
Սակայն մի նայիր դէպք աչն կողմը:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ինչպէ՛ս չը նայեմ. տես, նա կանգ առաւ,  
Եւ կարծես՝ թէ ինձ մաՀ է սպառնում.  
Նա կանչում է ինձ դէպի դերեզման...  
Ո՛վ անգուժ դու հայր, բաւական չ՛եղաւ,  
Որքան որ դո՛հեր տարար հողի տակ.  
Այժմ եկել ես որդո՛ւդ տանելու...

ՏԻՐԱՆ

Ո՛հ, հանգստացիր, Սրտաւազդ եղբայր:

ԱՐՏԱՒԱԶԴ (դէպի նոյն կողմը)

Ո՛չ, դու չե՛ս կարող այդ երբէք անել.  
Մահը չի՛ կարող մերձենալ քաջիս.  
Սրտաւազդ արքան անմատչելի՛ է,  
Հո՛ր, անյողո՛ղդ և անընկճելի՛:  
Սրտաւազդ արքան ի՛նքն է միշտ սփռում

Իր շուրջը սև մաՀ. ի՛նքն է միշտ սփռում  
Բողբի վերայ սարսափանք և աՀ.  
Նորա ահաւոր, սաստիկ հրամանից  
Հսկայ լեռները շարժում են տեղից...  
Իսկ դո՛ւ, դո՛ւ, տկար, թո՛ղլ, անդո՛ր մեռել,  
Մի՛թէ ուզում ես ինձ սարսափեցնել  
Քո դատարկ, ունայն ըսպառնալիքով.  
Հեռո՛ւ ինձանից...

ՏԻՐԱՆ

Ո՛վ ինչպէ՛ս լուրս ինձ հետ ես խօսում.  
Հաւատացնում եմ, այնտեղ մարդ չը կայ:

ԱՔԵՂԵԱՆ (առանձին)

Ո՛վ դու Սրամազդ...

ԱՐՏԱՒԱԶԴ (դայրսցած)

Հեռո՛ւ ինձանից,  
Հեռո՛ւ, զարշելի՛...

(Մերկայնելով սուրը՝ վազում է առաջ և զարկում քարին)

Ահաւասիկ այսպէ՛ս... Տե՛ս, սպանեցի.

Այլ ևս չը կա՛յ...

(Ժայռերի տակից լսում է ողինների քրքիշ)

## ԱՐՏԱԻԱԶԴ

Ի՞նչ, ծիծաղո՞ւմ էք... Տիրան, Աբեղեան,  
Ալի դո՞ւք էք ծաղրում ձեր թագաւորին:

ՏԻՐԱՆ (ապշած)

Օ՛, ինձ քաւ լիցի...

ԱՔԵՂԵԱՆ (ապշած)

Ամենևին ոչ...

## ԱՐՏԱԻԱԶԴ

Իսկ այն ի՞նչ վայրի, լկտի քրքիջ էր:

ԱՔԵՂԵԱՆ

Քամին էր գուցէ ժայռերին դարնուում...

ԱՐՏԱԻԱԶԴ

Քամին չէր բնաւ. քրքիջ էր լկտի...

Այո՛, քրքիջ էր, ծաղրական, դառը՝  
Թունաւո՞ր քրքիջ...

(Դարձեալ լսում է ոգիների քրքիջ)

ԱՐՏԱԻԱԶԴ (մոլեգնած)

Նենգամիտ Տիրան,

Քո եղբայրներին, բոլոր քոյրերին

Ես արտաքոնցի իմ կալւածքներից,

Ղրկեցի առմիշտ նորանց Առբերան

Ու Աղիովիտ մեր գաւառները,

Իսկ քեզ խղճացի, պահեցի ինձ մօտ,

Իբրև իմ գահի միակ ժառանգին...

Մակայն ժառանգը ծաղրո՞ւմ է այսօր

Իր բարեխնամ մեծ թագաւորին...

Կաց, կաց, ապերա՛խտ, դո՛ւ երախտամո՞ւ...

(Սուրը ձեռքին յարձակում է Տիրանի վերայ:  
Տիրանը սարսափած փախչում է)

Ե Ր Ե Լ Ո Ղ Թ 1 V

## ԱՐՏԱԼԱՊԳ ԵՆ ԱՐԵՂԵԱՆ

ԱՐՏԱԻԱԶԴ

Գնա՛ց, չքացա՛ւ... բաց չի՛ ազատել.

Սրովըս ահեղ ես կը պատառեմ

Գարշելի կուրծքը և դուրս կը պոկեմ

Չարութեամբ լցւած նորա նենգ սիրտը...

Եւ դո՛ւ, Աբեղեան, դո՛ւ, թշւառական,

Դո՛ւ էլ ծաղրեցիք քո թագաւորին.

Դու գովում էիր, պնդում էիր՝ թէ

Արտաւազդ արքան հմուտ ու փորձւած

Նետաձիգ է քաջ... Կաց, կաց, Արտաւազդ

Ուզում է փորձել իր հմտութիւնը.



Ռիցուք, Աբեղեան, դու մի վարագես,  
Իսկես մի զուլած, Հմուտ նետաձիգ...

(Ուզում է նետահարել Աբեղեանին, որ խկոյն  
փախչում է: Ժայռերի տակից դուրս են գալիս մի  
խումբ ոգիներ՝ ձեռքերին բռնած ծանր շղթաներ):

Նրեւոյթ V

Արսաւազդ եւ ոգիներ

ՈԳԻՆԵՐ (քրքշալով)

Հա, Հա, Հա, Հա, Հա...

ԱՐՏԱՒԱԶԴ

Առայէք, ո՞վ էք:

Ա. ՈԳԻ

Ես նա եմ, որ միշտ եղել է և կայ:

Որը դառնում է երբեմն մրջին,

Երբեմն Հսկայ, երբեմն էլ ոչինչ:

Որ չուսի ոչ տեղ, ոչ էլ ժամանակ,

Սակայն ամեն ժամ ամենայն տեղ է:

Բ. ՈԳԻ

Իսկես էլ նա եմ, որ Հալածում է

Ազաւութիւնը ու սև նախանձր...

ըմպիրդան նուրգաւ: ՈԳԻ իոց ուն էլ իմ

Որ մաքառում է չարութիւնների,

Նենգութիւնների, անիրաւութեան,

Ստոր կրքերի և կեղծիքի դէմ:

Առոմոցո ց. շմ. Գ. ՈԳԻ սյա ց. ԵՊ

Ես նա եմ, որ միշտ խստիւ պատժում է

Բողոք ապերախտ այն որդիներին,

Որոնք անարգում, նշաւակում են

Իրանց ծնողաց անբիծ անուներ,

Նախանձում նորանց փառքին ու պատւին...

Ա. ՈԳԻ

Գերեզմանի մէջ անՀանգիստ անում

Նորանց աճիւնը ու ոսկորները:

Գ. ՈԳԻ

Իսկես զլորում ու տապալում եմ

Մառյլ անդունդը այն անգութ մարդուն...

Գ. ՈԳԻ

Որ զրկում է իր Հարազատ եղբոր

Ու նորա վերայ ձեռքը բարձրացնում:

Ե. ՈԳԻ

Իսկես Հայրական ահեղ անէծքի,

Արդար նզովքի սպասաւորն եմ,

Եւ իմ ձեռքով են կատարուում մարդկանց  
Ողջ անէծքները:

ԱՐՏԱԻԱԶԴ

Բայց ինչ էք անում

Դուք այս լեռներում, ի՞նչ էք որոնում:

Ա. ՈԳԻ

Որսի ենք եկել...

ԲՈՂՈՐԸ (միասին)

Որս ենք որոնում:

ԱՐՏԱԻԱԶԴ

Եւ դուք կարծում էք, ես եմ ձեր որսը:

Ա. ՈԳԻ

Մենակ չենք կարծում...

ԲՈՂՈՐԸ (միասին)

Դու էլ ես մեզ հետ

Այդպէս մտածում:

ԱՐՏԱԻԱԶԴ

Սակայն այդ ի՞նչ է:

Ա. ՈԳԻ

Գերութեան ծանր, ահեղ շղթաներ:

Եւ ո՛ւմ էք ուզում դուք այստեղ գերել:

Ա. ՈԳԻ

Որին որ ինքրդ չէիր կամենալ

Ու չես կամենում, որ նորան գերեն:

ԱՐՏԱԻԱԶԴ (զայրացած)

ձանաչեցի՛ ձեզ, Մասեաց չար քաջքեր,  
Հեռո՛ւ ինձանից, դուք հողի որդեն՛ր,  
Չաղիր մողէսներ, դուք գարշ խլուրդեն՛ր,  
Ժայռ ու քարափի ճեղքերի օձե՛ր...  
Տեսէք, թէ ո՛վ է կանգնած ձեր առաջ.

Հայոց արքա՛ն է անյաղթ, անվեհեր.  
Ոտնատակ կը տայ նա ձեր լեռները,  
Աւազ ու փոշի կը դարձնի բոլոր  
Ձեր քարափները, ապառաժները.  
Քարուքանդ կ'անի քարանձաւները,  
Կը ջնջի իսպառ ձեր բոլոր ցեղը...  
Է՛յ, նախարարնե՛ր, է՛յ, Հայոց քաջե՛ր,  
Ժողեցէ՛ք այստեղ, ժողովէ՛ք բոլոր  
Իմ սպառազէն ահեղ գնդերը,  
Եկէ՛ք խորտակենք Մասեաց լեռները,  
Ջնջենք նորանց պիղծ բնակիչներին...  
Նժո՛ղրս բերէք, նժո՛ղրս տւէք...

(Վազում է դէպի լեռները)

ՈԳԻՆԵՐ (վաղելով նորա յետևից)

Հան, Հան, Հան, Հան, Հան... ց է նա՛ն այ՛

(Ողիները և Արտաւազդ անյայտանում են լեռներում)

ԱՐՏԱՒԱԶԴԻ ԶԱՅՆԸ

Տիրան, Արեղեան,

է՛յ, զօրականնե՛ր, է՛յ, նախարարնե՛ր...

ՈԳԻՆԵՐԻ ԶԱՅՆԸ

Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛...

ԱՐՏԱՒԱԶԴԻ ԶԱՅՆԸ

Տիրան, Արեղեան...

(Զանազան կողմերից շփոթւած մտնում են Տիրան և Արեղեան)

Ն Ր Կ Լ Ղ Մ Վ Ի

Տիրան և Արեղեան

ԱՌԵՂԵԱՆ

Տիրան, լսեցի՞ր — արքայի ձայնն էր:

ՏԻՐԱՆ

Լսեցի, այո՛, նա մեզ էր կանչում...

ԱՌԵՂԵԱՆ

Ո՛ր կողմը գնաց, ո՛ր կողմը գնաց...

ՏԻՐԱՆ

Զը գիտեմ՝ ո՛ր կողմ. բայց ձայնը կարծեմ Մօտից էր գալիս:

ԱՌԵՂԵԱՆ

Այո, մօտից էր.

Սակայն չը գիտեմ՝ դէպի ո՞ւր գնամ:

ՏԻՐԱՆ

Դու գնա՛ դէպի ահա այն կողմը, Իսկ ես կը գնամ դէպի խոր ձորը.

Սակայն զգոյշ կանց, նա զայրացել է:

ԱՌԵՂԵԱՆ

Միրելի՛ Տիրան, մեծ է Արամազդ...

ՏԻՐԱՆ

Արամազդ մեծ է, իսկ մարդիկ չնչին...

(Տիրան և Արեղեան անյայտանում են լեռներում: Մտնում են Ամատունի և Առաւելեան):

Երեւոյթ VII

Ամասունի եւ Առաւելեան

ԱՄՍՏՈՒՆԻ

Հէնց որ նետովըս զարկեցի կողին,  
Իսկոյն թաւազլոր ընկաւ ձորի մէջ:  
Չ'անցաւ շատ միջոց և տեսայ յանկարծ,  
Որ զինւորներըս որսը բերում են:

ԱՌԱԻԵՂԵԱՆ

Իսկ ես շրջեցի, շատ թափառեցի,  
Բայց, խօսքս մեր մէջ, ոչ մի բան չ'արի.  
Կարծես՝ թէ այսօր բոլոր որսերը  
Անյայտացել են երկրի երեսից:

ԱՄՍՏՈՒՆԻ (աղանջ զնելով)

Սպասիր... Կարծես՝ խուլ ձայն է հնչում...

ԱՌԱԻԵՂԵԱՆ (աղանջ զնելով)

Ոչինչ չեմ լսում: Ո՞վ գիտէ՝ ինչ է.  
Գուցէ մերօնք են երգում լեռներում:

ԱՄՍՏՈՒՆԻ

Բայց երգի ձայն չէ, այլ հառաչանքի:

ԱՌԱԻԵՂԵԱՆ

Մասիսը մի մուրթ ու սև աշխարհ է.  
Հարուստ է նա միշտ պէսպէս բաներով,  
Անյայտ իրերով. նորա խորքերից  
Լսում են յաճախ խուլ, անմեկնելի,  
Անորոշ ձայներ:

ԱՄՍՏՈՒՆԻ

Բայց ասում են, որ...

ԱՌԱԻԵՂԵԱՆ

Շատ բան են ասում, սակայն ո՞վ գիտէ...

ՏԻՐԱՆԻ ՉԱՅՆԸ

Բայց չէ՛ երևում, չը կայ ու չը կայ  
Ե՛լ, շուտ հնչեցրէք բոլոր փողերը,  
Թող ամեն կողմից հաւաքւեն մերօնք...

(Լսում են փողերի ձայներ: Երկինքը հետզհետէ մթնում է):

ԱՄՍՏՈՒՆԻ

Ի՞նչ է պատահել...

ԱՌԱԻԵՂԵԱՆ

Ո՞ւմ են որոնում...

## ԱՄՍՏՈՒՆԻ

Ես քեզ ասացի, որ ձայն է լսում,  
Բայց դու իմ խօսքին չը հաւատացիր...

(Փողերը հնչում են. դանդաղ կողմերից մտնում են Տիրան, Դիմաքսեան, Արեղեան և զօրականներ)

## Երեւոյթ VIII

Տիրան, Ամասունի, Դիմաքսեան, Արեղեան, Առաւելեան և զօրականներ

## Տիրան (այլալուծ)

Արդեօք չէք տեսել դուք թագաւորին.

Ձր գիտէք արդեօք՝ ո՞ր կողմը գնաց.

Ո՞չ... ո՞չ... չէք տեսել... Ուրեմն կորսւե՛լ,

Ձքացա՛ւ արքան... Ե՛լ, զօրականներ,

Շուտով ցրեցէ՛ք Մասեաց լեռների

Բոլոր կողմերը, մտէ՛ք դուք մթին,

Խոր-խոր ձորերը, սև անդունդները

Եւ անմատչելի, գաղտնի տեղերը.

Ձայն տէ՛ք, կանչէ՛ք, շուտ որոնեցէ՛ք...

Դէ՛, իմ կտրիճներ. ովոր արքայից

Ինձ մի լուր բերի, կ'ընծայեմ նորան

Մի սիրուն նժուգ և կը պարզեմ  
Թանկագին դէնքեր, կըտամ մեծ պաշտօն.

Եթէ մեռած է, դիակը գտէ՛ք.

Թէ կենդանի է, տեղը յայտնեցէ՛ք.

Եթէ հիւանդ է կամ թէ վիրաւոր,

Տանենք ապարանք, դարմանենք նորան...

Սակայն ինչո՞ւ չէք շարժուում ձեր տեղից.

Այդ ի՞նչ սառնութիւն, անտարբերութիւն:

Ուրեմն արքան ոչի՛նչ ձեզ համար...

Վերջապէս մի՞թէ դուք իմ խնդիրը,

Իմ հրամանը, իմ պատւիրանը

Ձէք յարգում բնաւ... Ուրեմն Տիրան

Թագաժառանգ չէ հայ ազգի համար...

(Գահաւանդի գլխին յանկարծ յայտնուում է սուսերամերկ Արտաւազգը՝ պաշտպանելով ոգիները յարձակումից. վերեւից տեսնելով Տիրանին, նախաբարձներին և զօրականներին, յուսահատուած ձայնում է. «օգնեցէ՛ք, կորսւցէ՛ք...» Այդ միջոցին լսում է ուժգին որոտմունք: Ոգիները, յանկարծ տապալելով Արտաւազգին անդունդի մէջ, չքանում են նորա հետ միասին: Ժայռերը թափուում են: Լսում են ստորերկրեայ անհղ դղրդոցներ: Ամենքը սարսափահար նայում են վեր: Պատկեր):

## Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

նմանցաք ցի մ. բլոնմ մտղիս զՄ  
 մտաչար Յնն նատցի զմզմէր միբոնմա  
 . ց. յար ցիւայր . յ ծառնն յէթ  
 . ց. յբմնայոյ պրմո . յ մնարմով յԳ  
 համ Են . դուսդիլի . յԵն նաթ յ յմնարմ յԵն  
 . մաղսմ **Չ ՈՐ Ր ՈՐ Դ Պ Ա Տ Կ Ե Ր** մաՅ  
 . ըրբմոս ցմճ նուսեղաց ց. իչ . ունի մլալոս  
 : մալի յոզմղատմա . մալի յնոմ . սաս չմի բլմ  
 Մոպ քարայր Մասեաց շեռնեռում  
 . ցցիբմով նի ց. ուր յԵնն ս. յաւաջով  
 յիւսմ . յցմաղլատոս նի . յմանեղձ նի բլ  
 զմաղլՅ մնեղլմ . . . մամղ նուրբոյ ց. իչ  
 . . . ցանաձ մբրա յաձ յ. ումնուսեարաճ  
 Երեւոյթ I

յ նուսմարոյ ճցաթմալ միլիլր իրմնաւածաՔ)  
 մջմմիբո իոյնմնարաչար . ցբրաւաղմ իրմնաղմուս  
**Արտաւաղղ շղթայակալ բանտարկւած է: Մի սպի-**  
**տակ և մի սև գամփու կրծում են նորա շղթաները:**  
 - նա յ նուսոյ միբրոչի բլմ . . . յաղոլ . ց. յբմնար . յ  
 - զՄ իոյնյաթաա ճցաթմալ . յցմմիբլմ : ցմնուսողո միբ  
 աձձ աղոմ մմ նուսմ . յմնարմնա միբրաւաա  
 - յմզոտա մմ նուսոլ մմ նուսոլ մմ նուսոլ . ցցմաղլաճ : միմաթի  
 - ալմ ց  
**ԱՐՏՍԱԽԱՉԴ**

**Մարդիկ շներ են, շները—մարդիկ:**  
**Եթէ ազատւեմ գերութեան ծանր**  
**Այս շղթաներից, ողջ մարդկութիւնը**  
**Կը ջնջեմ իսպառ, շներով միայն**  
**Կը լցնեմ աշխարհ. կ'ընտրեմ ինձ Համար**

Շուն թագաժառանգ, կը նշանակեմ  
 Շուն նախարարներ, շուն խորհրդակից  
 Ու բարեկամներ: Եւ իմ մտերիմ  
 Սրտակիցները կը լինեն ոչ թէ  
 Դաւաճան մարդիկ, այլ Հաւատարիմ  
 Ծները ազնիւ... Տագնապի ժամին  
 Արտաւաղղ արքան օգնութեան կանչեց,  
 Բայց ոչ ոք չ'եկաւ. ամենքը նորան  
 Դաւաճանեցին ու մենակ թողին:  
 Մնացին նորան լոկ Հաւատարիմ  
 Անբաժան ընկեր այս գամփուները:  
 Իմ անդին շներ, ազնիւ գամփուններ,  
 Դէ, կրծէ՛ք, կրծէ՛ք դուք իմ շղթաներ.  
 Կրծէ՛ք, որ մաշւեն այս երկաթները,  
 Կրծէ՛ք, որ շուտով ելնենք լոյս-աշխարհ,  
 Որ լոյս-աշխարհը մթնացնենք իսպառ  
 Կործանենք իր ժանտ մարդկային ցեղով:  
 Ինչպէս ընկանք ցած մեր բարձրութիւնից,  
 Այնպէս էլ ցածից մենք կը բարձրանանք—  
 Բարձրը ընկնում է, ցածրը բարձրանում.  
 Կը գայ ժամանակ, և Հեռու չէ այն,  
 Երբ կը խորտակեմ պիրզ շղթաներըս,  
 Վեր կը բարձրանամ և կը տապալեմ  
 Մասեաց լեռները աշխարհի վերայ:

(Մտնում են ողիները)

նմանաճճճ զի , բմա.առեարաճի մ.առճ  
բլլարդ.ճոգոյ մ.ոռ. զմմողապամ մ.առճ  
նկզմուն նկ ճճ. զմմնայնեղադ ճի  
ճի ճո մմմիլ զի զգմմբլլատուցՄ

Արսաւազդ եւ ոգիներաւաւՄ

մկնաճ վրամբաճ ... մկմբա զգմմճ  
բճճմայ մամմ.առճ Մ. ՈԳԻ

Սյո՛, թէ միայն ճանր, ամրակուռ

Քո շղթաները լինէին ղերճան...

Բ. ՈԳԻ

Իսկ Մասեաց հսկայ, բարձր լեռները

Լինէին փետուր կամ մի չոր տերև:

Ս. ՈԳԻ

Բայց շղթաներդ հաստատ են, ամուր...

Բ. ՈԳԻ

Որպէ՛ս մեր բարձր, հսկայ լեռները:

Ս. ՈԳԻ

Իսկ մեր լեռները հաստատ են, ամուր...

Բ. ՈԳԻ

Որպէ՛ս երկաթէ քո շղթաները:

ԱՐՏԱԻԱՉԴ

Բայց որոշումըս աւելի հաստատ,

Աւելի ամուր, տելի պինդ է,

Քան ձեր լեռները և շղթաները:

Ք. ՈԳԻ

Կան որոշումներ, որոնք աւելի

Հաստատ են, հզօր, քան թէ մարդկային

հոլոր հաստատուն որոշումները:

Բ. ՈԳԻ

Կան բարձր ոյժեր, որոնց առաջին

Միշտ խոնարհոււմ են ու նսեմանում

Մարդկային բոլոր բարձր ոյժերը:

ԱՐՏԱԻԱՉԴ

Սրտաւազդ արքան ոչ մի ժամանակ

Դեռ չի խոնարհուել և չի խոնարհուել

Ոյժերի առաջ. նա կը սոսկացնի

Երկինք ու երկիր, կը խոնարհեցնի,

Ոտնատակ կը տայ ամենայն մի ոյժ.

Նա կը ջախջախի ամեն զօրութիւն,

Կը մնայ ընդմիշտ անյաղթ, աննկո՛ւն...

Դ. ՈԳԻ

Բայց այդ աննկուն և անյաղթ քաջին

Հայրական հզօր անէծքը այսօր

Ընկճել է իսպառ, տապալել անդունդ:

## ԱՐՏԱՒԱԶԴ

Թէպէտ իմ մեռած հայրը լամեն տեղ՝  
 Անէճքը բերնին՝ հալածում է ինձ,  
 Սակայն անէճքը, իբրև մի թեթև  
 Ու սահող քամի, անհետանում է  
 Եթերի միջին: Եւ սահող, թեթև  
 Այդ քամուց յետոյ՝ մարդկանց բերանից  
 Լսել եմ ես միշտ բիւր օրհնութիւններ...

(Յանկարծ յայտնուում է Ե. ոգին)

## Երեւոյթ III

Նորանց եւ Ե. ոգի

Ե. ՈԳԻ

Կեղծում են մարդիկ. թէկուզ չը կեղծեն,  
 Գարձեալ ծնողի անէճքը հօր  
 Կը ջնջի իսպառ աշխարհի բոլոր  
 Օրհնութիւնները, կը ցամաքեցնի  
 Մարդկանց սրտերի բարեմաղթութեան  
 Ջերմ աղբիւրները... Վնչ այն որդուն, որ  
 Արժանանում է իր հօր անէճքին.  
 Աւելի լաւ էր, եթէ չը ծնէր  
 Նորվաճ որդին, չքանար յաւէտ  
 Իր մօր արգանդում՝ իր սաղմի միջին:

## ԱՐՏԱՒԱԶԴ

Օ, միթէ այնքան դարձելի էի,  
 Որ հայրս թափեց իմ գլխին անէճք:

Ե. ՈԳԻ

Որքան որ զաղեր, գարշելի լինի  
 Որդին հօր համար, դարձեալ ոչ մի հայր  
 Չի ցանկալ երբէք, որ իր արիւնից  
 Ծնունդ առածը կորչի յաւիտեան:  
 Բայց, ով Արտաւազդ, քո ներողամիտ  
 Հայրը համբերեց, համբելեց երկար,  
 Ու վերջը սառը իր գերեզմանից  
 Կարդաց օրհասիդ ահեղ վճիռը...

Ս. ՈԳԻ

Որովհետև դու ծնողիդ համար  
 Ոչ միայն զաղեր, գարշելի էիր...

ԲՈՂՈՐԸ (միասին)

Այլ և մեծ չարիք, սոսկալի հրէշ:

ԱՐՏԱՒԱԶԴ (զայրացած)

Լռեցէ՛ք, օ՛ դուք քարափի օձեր...

Ե. ՈԳԻ

Սորանից յետոյ մեր քարափներն են  
 Բնակավայրըդ. կը մնաս այստեղ



Եւ կը տառապես, կը տանջես անվերջ  
ժայռերի տակին... մաքուր լիցի...  
... ցճճմա միայն ԱՐՏԱԻԱՉԴ

Բայց տառապանքիս

Ու տանջանքներիս ես վրէժն ու ցիրը  
Աշխարհից կ'առնեմ, որովհետեւ իմ  
Թշուառութիւնը ծնունդէ առելիք  
Միայն մայրաքաղաքից: Մայր, թէ միայն  
Դու կրկին անգամ տեսնէիր աշխարհ:

ԱՐՏԱԻԱՉԴ

Կը տեսնեմ անշուշտ, դուք չա՛ր ոգիներ...

Այո, մենք չար ենք, միայն քեզ համար,  
Որովհետեւ մենք միշտ կործանում ենք  
Զարութիւնները...

ԲՈՂՈՐԸ (միասին)

Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛...

(Անյայտանում են)

... սար քմիկիմ քմիջ, թառառայա՛ր ծղարմամ  
... դամ

Երեւոյթ IV

... Եւ սո՛ւյա-ցմիւռոյ դատարն առ զայն  
մաքուր ԱՐՏԱԻԱՉԴ (մենակ)

Դարձեա՛յ մութ անդունդ, սոսկալի՛ ժայռեր:

Ո՛ւր է իմ փարթամ պալատը շքեղ  
Եւ մարքայական փմ գահը սուկէ...  
Ո՛ւր են անհամար իմ բարիքները,  
Իշխանութիւնըս, փառքըս, պատիւըս:

Ո՛ւր է ոսկեփայլ արևը պայծառ  
Եւ արծաթաշող լուսինը չքնաղ...  
Ո՛ւր է երկնքի կամարը կապոյտ,  
Անթիւ, անհամար աստղերը փայլուն...

Օ՛, Արտաւանգը, Արտաւանգը, Արտաւանգը,  
Զո՛ւրկ ես դու այժմ, զո՛ւրկ ամեն բանից:  
Բաժինըդ միայն մուսլը մնաց,  
Մնաց գերութեան այս անարգ շղթան:

Գեղ ազարանքըդ դարձել է քարայր,  
Գահըդ՝ չոր գետին, թագըդ՝ հոր անէծք:  
Փառքըդ դարձել է սև ստրկութիւն,  
Պատիւըդ՝ պատիժ, դառը՝ տառապանք...

Ա՛խ, երանի թէ մշուշով պատած  
Իմ խաւար բանտի կամարը ժեռոտ

Յանկարծ կապուտակ, ջինջ երկինք դառ-  
նար,

Շողշողար վերից արևը սլայծառ,

Յուլար ու ժպտար լուսինը-ալ ծաթ...

Փայլի մէջ ծնւած Արտաւազդ արքան

Կարօտ է այսօր մի աղօտ լոյսի:

Ա՛խ, երանի թէ ապառաժները

ձեղքէին յանկարծ, լոյսը թափանցէր

Խաւար բանտիս մէջ, որ ես տեսնէի

Աշխարհը հեռւից, իմանալի՝ թէ

Ի՛նչ է կատարում իմ պետութեան մէջ...

Գուցէ կարծում են՝ մեռել է արքան,

Եւ ժողովուրդը, նախարարները

Ողբում են իրանց արքայի մահը

... Աւստրա պատերն մեռնում ինքնակամ:

Կամ գուցէ Տիրան բազմել է գահիս,

Տիրել իմ երկրին ու բարիքներին...

Ո՛չ, ո՛չ Տիրան, իրաւունք չունիս—

Արտաւազդ արքան կենդանի է դեռ.

Արտաւազդ կը գայ, կը գայ նա շուտով,

Կը գահավիժի, քեզ կը տապալի

Ու ինքը՝ դարձեալ կը թաղաւորի...

... Գ՛տակայն աշխարհից ձայներ եմ լսում,

Կարծես՝ թէ այնտեղ երգում են, խնդում...

### ԵՐԳԻ ԶԱՅՆԵՐ

Կործանեցաւ չարը խալառ,

Ազատեցաւ Հայոց աշխարհ.

Ձեզ աւետիք, մեզ աւետիք,

Թէ ձեզ, թէ մեզ մե՛ծ աւետիք:

Փնօք, օրհնութի՛ւն Արամազդին,

Որ տապալեց Արտաւազդին.

Ձեզ աւետիք, մեզ աւետիք,

Թէ ձեզ, թէ մեզ մե՛ծ աւետիք...

### ԱՐՏԱԻՍՉԴ (զայրացած)

Ուրեմն մարդիկ ցնծութեան մէ՛ջ են

Եւ կարծում են, որ այլ ևս չը կամ:

Բայց սխալում էք, թշուառականներ.

Արտաւազդ արքան շուտով կը փշրի

Իր կապանքները, կը գայ նա ձեզ մօտ,

Շանթեր կը թափի աշխարհի վերայ

Եւ աղուլեղի՛ կը դարձնի բոլոր

Այդ ձեր հրճւանքը և խնդութիւնը.

Նա կը սեւացնի՛ ամենքիդ գլխին

Պայծառ երկինքը, այդ ուրախ երգեր

Կը դարձնի խորոնկ, շարաւո՛տ վերքեր-

Եւ այն ժամանակ՝ երգի փոխանակ՝

Կը հնչի միայն լաց ու հառաչանք...

ՉՍՅՆԵՐ

Կեցցէ՛ վե՛հ Տիրան, Հայոց թագաւոր:

ԱՐՏԱՒԱՉԴ

Ի՞նչ... Տիրան Հայոց թագաւոր...

Անկարելի՛ է, անկարելի՛ է...

(Յայտնու՛մ է մի ոգի)

Սրբեւոյթ

Արսաւագդ եւ ոգի

մձ ք՛ն մամեյա՛նք իկրդան մեմգա՛մ

նայ զք սալ յառ **ՈԳԻ** մձ հտձոյալ ասխարհ

Է՞ր ես կարծում, որ անկարելի է:

ԱՐՏԱՒԱՉԴ

Որովհետեւ ես կենդանի եմ դեռ:

ՈԳԻ

Սշխարհի Համալս մեռած ես արդէն:

ԱՐՏԱՒԱՉԴ

Ո՛չ, ես մեռած չեմ, և անհնարին է,

Որ Տիրան լինի Հայոց թագաւոր:

Չեմ կարող հաշտել ես այդ մտքի՛ Հետ...

ՈԳԻ

Նայիր, Տիրանը առօք ու փառօք

Բազմել է գահին և իշխանները

Հլու շարւած են նորա առաջին...

(Յանկարձ պատկերանում է արքայական փառահեղ գահին, որտեղ Տիրանը նստած է գահին. նախարարները և պալատականները շարւած են նորա առաջ: Պատկերը փակու՛մ է):

ՈԳԻ

Այժմ հաշտեցիր դու այդ մտքի՛ Հետ:

ԱՐՏԱՒԱՉԴ (մոլեգնած)

Եւ ո՛վ է ընտրել նորան թագաւոր...

Կը կտրե՛մ սրով այն մարդու ձեռքը,

Որ պրսակել է նորա գլուխը

Իմ արքայական ոսկեղէն թագով:

Ծանր նիզակով կը ձեղքեմ կուրծքը

Եւ դուրս կը պոկեմ լերդը և թոքը

Ու դամբա՛ններիս կերակուր կը տամ:

Իմ եղունգներով ես կը ճանկուտե՛մ,

Ես կը յօշոտե՛մ նորա երեսը,

Ով յանդդնել է բազմել իմ գահին,

Տիրել իմ երկրին ու բարեքններին:

Կը պատառոտե՛մ նորա ծիրանին

Եւ արքայական ոսկէ հանդերձը:

Ամբողջ պալատը ես կը կործանե՛մ,  
 Հիմքից կը քանդե՛մ, մոխի՛ր կը դարձնեմ,  
 Կը ջնջե՛մ նորան փլատակների տակ.  
 Ահաւոր սակրով ես կը ջախջախե՛մ  
 Հայ իշխանների բոլորի գանգը  
 Ու ցրիւ կը տամ նորանց ուղեղը...  
 Ամբողջ Արտաշատ ես կը հեղեղե՛մ  
 Բնակիչների կարմիր արիւնով  
 Եւ կը լողանամ արեան գետերում.  
 Յորդառատ, կարմիր արեան գետերը  
 Ծարաւած սրտով կը խմե՛մ, որ իմ  
 Սիրտը հովանայ, պապակիքս անցնի...  
 Կրճէք, օ՛ կրճէք, ազնիւ գամփռնե՛ր,  
 Իմ հաւատարիմ անբան ծառաներ...  
 Ես էլ եմ կրճում... Տես, բարակում եմ  
 Հաստ շղթաները... Օ՛, ուրախութիւն:  
 Ինչպէս է, ինչպէս, մեծախօս ոգի.  
 Այժմ տեսնո՞ւմ ես, որ հօր անէծքը  
 Թեթեւ ու սահող քամի է եղել.  
 Այժմ տեսնո՞ւմ ես, որ Արտաւազդին  
 Ձեն կարող ընկճել ձեր կապանքները...  
 Ողորմելիներ՛, և կարծում էիք,  
 Որ ես կը մնամ չաւիտեան այստեղ:  
 Ահա նայեցէ՛ք, ձեր շղթաները  
 Դարձել են բարակ, փափուկ դերձաններ...  
 Դէ՛, կրճէ՛ք, կրճէ՛ք, սիրելի շնե՛ր,

Ձեզ կը կերակրեմ կաքաւի մտով  
 Եւ անուշահամ ուտելիքներով.  
 Մի փոքր էլ կրճէք, ահա հէնց այդպէս...  
 Ահա բարակե՛ց, բարակե՛ց իսպառ.  
 Գալիս եմ, գալիս, եղկելի՛ աշխարհ...

ՈԳԻ

Մի՛ ուրախանար, թշուառ Արտաւազդ,  
 Փրկութիւն չը կայ երբէք քեզ համար.  
 Շուտով բարակած քո շղթաները  
 Կը հաստանան և կը զօրեղանան:  
 Դարբիններ՛...  
 (Չտապով մտնում են մի խումբ ոգիներ, բե-  
 րելով իրանց հետ մի ահագին սալ և ծանր մուր-  
 ճեր):

Ն Բ Ե Լ Ո Ղ Թ VI

Արտաւազդ եւ ոգիներ

ՈԳԻՆԵՐ (զարկելով սալին)

Հէպ-հօ՛պ, հէ՛պ-հօ՛պ, հէ՛պ-հօ՛պ...

ՈԳԻ

Կռանի ձայնը վերացաւ աշխարհ,

Ահա ժողովներն այնտեղի բոլորը  
Հայ դարբինները, մուրճերն առան,  
Որ զարկեն սալին, նորից զօրացնեն  
Քո շղթաները: Եւ ամեն տարի  
Նորանք այս օրը պիտի հեռեն  
Մեր օրինակին... Զարկում են, լսիր...

(Հեռուից լսում են կոանահարութեան ձայներ)

ԱՐՏԱԽԱԶԴ (դառնացած նայելով շղթաներին)

Ահ, զօրանում են, Հաստանում նորից...

(Ընդհանուր կոանահարութիւն, թէ դուրսը և  
թէ ներսը):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



Վ Ր Ի Պ Ա Կ

48 երեսի երկրորդ տողում Տիգրան բառի տեղ  
պէտք է լինի Աբեղեան

ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

1) ԽՕԼԵՐ, փողըլիլ (սպառւած)	. . .	10 Կ.
2) ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵԻԵՐԸ (Թարգմ.)	. . .	30 Կ.
3) ԱՄՈՒՐԻՆ (սակաւաթիւ)	. . .	20 Կ.
4) ՀԵՆԱՔ ու ԳԵՆԱԿ (սակաւաթիւ)	. . .	30 Կ.
5) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (սակաւաթիւ)	. . .	50 Կ.
6) ՄԵԼԻՔ-ԲԷՒԼԱՐ, պատմ. պօէմ (սակաւաթիւ)	. . .	10 Կ.
7) ՄԵԼԻՔ-ԻՒՍՈՒՓ, պատմ. պօէմ	. . .	20 Կ.
8) ՆՈՒԱԳՆԵՐ	. . .	30 Կ.
9) ՀԱԶԱՐԵՆ-ԲԼԲՈՒԼ, ֆէէրիա 3 արարւածով	. . .	30 Կ.
10) ՄՈՒՍԱ, պատմ. պօէմ, նւազ I.	. . .	20 Կ.
11) ՄՈՒՍԱ, » » նւազ II.	. . .	20 Կ.
12) ԱՐՏԱՒԱԶԳ Բ. պատմ. ֆէէրիա 4 պատկերով	. . .	30 Կ.

Գիտել՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ  
Чавчавадзевская ул. д. Маркарова № 25а.

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20% զիջում:

« Ազգային գրադարան



NL0340188

31.943